Մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի «Արճիսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի համաշխարհային պատմության /8 դասաժամ/, իմ հայրենիքը /2 դասաժամ/, իմ հայրենիքը և աշխարհը /2 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում /Ձև 1/, մեկ լուսանկար 3x4 չափի ,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/ ,

-անձը հաստատող փաստաթուղթ,

-<<Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/,

-ինքնակենսագրություն/Ձև 5/

-այլ պետությունների քաղաքացիները ՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները ՝ նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր/առկայության դեպքում/,

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մինչև սեպտեմբերի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ն , բացի շաբաթ,կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 10-ին ժամը 15:00-ին Տավուշի մարզի Արճիսի միջնակարգ դպրոցում. հասցեն ՝ գ. Արճիս փող. 11, փակուղի 1, շենք 2: Տեղեկությունների համար զանգահարել՝ /0266/ 6-39-91 կամ /093/03 25 72 հեռախոսահամարներով: